

ՏԵՂԵԿԱՅՈՒՄ

Ձորագետ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ձորագետ	Ավագանու հերթական նիստ	27.03.2020թ.	14:00	Ձորագետի համայնքապետարան (գ. Ձորագետ, 1փ. 41)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. մարտի 27-ին՝ ժամը 14.00-ին Ձորագետի համայնքապետարանում
կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 14.00

1. Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի մարտի 27-ի հերթական նիստի
օրակարգ հաստատելու մասին

զեկ. Ա. Գիրգորյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու
2019թվականի դեկտեմբերի 23-ի N 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ա. Գիրգորյան

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի մարտի 27-ի հերթական նիստի օրակարգը:

1. Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի մարտի 27-ի հերթական նիստի օրակարգ հաստատելու մասին:
զեկ. Ա. Գիրգորյան
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 23-ի N 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Ա. Գիրգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ
ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 39-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբեր 23-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին» N 39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից 1-6 հատվածների:

**« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Տ Ե Ղ Ե Կ Ա Ն ք - հ ի մ ն ա վ ո թ ու մ**

Ձորագետ համայնքի 2020 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019 թվականի դեկտեմբեր 23-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին» N 39-Ն որոշման մեջ կատարվող փոփոխությունների հիմնավարման մասին:

Համայնքի բյուջեի եկամուտներ

Հարկային եկամուտների ցուցանիշը հաշվարկելիս հաշվի են առնվել 2019 թվականին առաջացող հաշվարկային ցուցանիշները: Ձորագետ համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսվել է եկամուտներ 6456.5 հազար դրամ, սակայն 2020թվականի բյուջեի փոփոխության ընթացքում հաշվի է առնվել 2020 թվականին առաջացող հաշվարկային ցուցանիշները: Որի հիման վրա 2020թվականի բյուջեի եկամտային մասը կազմում է 9549.1 հազար դրամ:

Ընդամենը եկամուտներ այդ թվում	9549.1	հազար դրամ
• Վարչական բյուջեի մասով	9549.1	հազար դրամ
• Ֆոնդային բյուջեի մասով	զրո	դրամ

Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Ծախսային մասը հաշվարկելիս հաշվի է առնվել բյուջեի եկամտային մասի հաշվարկային ցուցանիշների փոփոխությունը, 2019թվականի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը 166.9 հազար դրամ և բյուջեի Ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը 59.2 հազար դրամ: Ձորագետ

համայնքի 2020 թվականի բյուջեով նախատեսված 6779.2 հազար դրամ ծախսերը, փոփոխություն կատարելու արդյունքում կազմում է 9775.2 հազար դրամ:

Ընդամենը ծախսեր այդ թվում	9775.2	հազար դրամ
• Վարչական բյուջեի մասով	9549.1	հազար դրամ
• Ֆոնդային բյուջեի մասով	301.1	հազար դրամ

Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Ձորագետ համայնքի բյուջեի փոփոխման արդյունքում տնտեսագիտական դասակարգման ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՝
Ընացիկ ծախսեր նախատեսված 6553.1 հազար դրամի փոխարեն ներկայումս կազմում է 9549.1 հազար դրամ:

Աշխատողների, աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածով նախատեսվել է 5500.0 հազար դրամ նախկին 5300.0 հազար դրամի փոխարեն: «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով իրականացվող աշխատանքների համար աշխատակիցների թիվը ավելացել է 4-ով:

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածով նախատեսվել է 700.0 հազար դրամ համայնքի բազմաբնակարան շենքի աստիճանների վերանորոգման ծառայության նպատակով:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածով նախատեսվել է 100.5 հազար դրամ, նախկին 10.5 հազար դրամի փոխարեն (համայնքապետարանի սեղանների, աթոռների և համակարգչային տեխնիկայի վերանորոգման և պահպանման համար):

- Հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածով նախատեսված 100.0 հազար դրամի փոխարեն ներկայումս կազմել է 2159.1 հազար դրամ, համայնքի բազմաբնակարան շենքի աստիճանների և «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով իրականացվող խաղահրապարակի վերանորոգման, բարեկարգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների համար անհրաժեշտ շինանյութերի և այլ պարագաների համար:

-Պարտադիր վճարներ հոդվածով նախատեսվել է 68.0 հազար դրամ, նախկին 99.5 հազար դրամի փոխարեն ծառայողական ավտոմեքենայի տեխ. զննության համար և պետական տուրք վճարելու նպատակով:

- Վարչական սարքավորումներ հոդվածով նախատեսվել է 75.0 հազար դրամ համայնքապետարանի համար գույք ձեռք բերելու նպատակով:

--Պահուստային միջոցներով նախատեսված 96.6 հազար դրամի փոխարեն ներկայումս կազմում է զրո դրամ:

Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դիֆիցիտը
(պակասուրդը)

Համայնքի բյուջեի հավելուրդը կամ դիֆիցիտը (պակասուրդը) կազմել է ֆոնդային բյուջեով 226.1 հազար դրամ: Որն էլ ուղղվել է ֆոնդային բյուջեի ծախսերի կատարման համար:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ